ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> Դեկտեմբեր 2015թ. N 58

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 118 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշումը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների նոր կազմը՝ նշանակելով ծառայությունների պետեր՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2008 թվականի մայիսի 21-ի «ՀՀ Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների նոր կազմը հաստատելու մասին» N 118 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2015 թվականի մարտի 25 -ի
N 58 որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների

1. **Կապի և ազդարարման մարզային ծառայության պետ**

Թ.Ասլանյան -«ԱրմենՏել» ՓԲԸ Արմավիրի մարզի ԳՄՑ շահագործման ուղղության ղեկավար

2. **Ինժեներական մարզային ծառայության պետ**

Կ.Դանիելյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

3. **Բժշկական մարզային ծառայության պետ**

Լ.Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

4. **Տրանսպորտային մարզային ծառայության պետ**

Հ.Կուրղինյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

5. **Առևտրի և սննդի մարզային ծառայության պետ**

Վ.Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

6. **Էներգետիկայի և լուսաքողարկման մարզային ծառայության պետ**

Լ.Փափազյան -«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի Արմավիրի շրջանային էլեկտրացանցի պետ

7. **Բույսերի և կենդանիների պաշտպանության մարզային ծառայության պետ**

Ա.Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

8. **Հասարակական կարգի պահպանման մարզային ծառայության պետ**

Ա.Այվազյան - Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ

9. **Նյութատեխնիկական մատակարարման մարզային ծառայության պետ**

Դ.Դավթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

10. **Կոմունալ-տեխնիկական մարզային ծառայության պետ**

Գ.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

11. **Բնակչության հատուկ սպասարկումների մարզային ծառայության պետ**

Հ.Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ